**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01**

ք. Ստեփանավան «26» մարտ 2026թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սևակ Գևորգյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արևային ֆոտովոլտային համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

***2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

***2.2 Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

***2.3 Կատարողն իրավունք ունի՝***

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **6000000 (Վեց միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում ենթակապալառու չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը :[1]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[2]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[3]

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ<br>ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1<br>ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>h/h900252101648<br>ՀՎՀՀ 06954104 | «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ<br>ք.Երևան, Ալեք Մանուկյան 15Ա<br>Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հաշվեհամար 2050022599141001<br>ՀՎՀՀ00152889 |
| ---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[3] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

Հավելված N 1
«26» 03 2026թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կատարման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 45261115/1 | 40.92 կՎտ պիկային հզորությամբ արևային կայան (66 հատ 620 Վտ Jinko Solar վահանակներ, 2 հատ 20 կՎտ Fox ինվերտորներ) ,որը տարեկան կապահովի 45073 կՎտժ էլեկտրաէներգիա | դրամ | **6000000** | **6000000** | 1 | ի.Ստեփանավան | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 10.04.2026թ. ընկած ժամանակահատվածը |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

### ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնքի համար արևային ֆոտովոլտային համակարգ

***Ընդհանուր նկարագրություն***

| | | |
|---|---|---|
| 1 | Համակարգի նկարագիրը | Նվազագույնը 40 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային համակարգ, տեղակայմամբ |
| 2 | Արևային ֆոտովոլտային համակարգերի համար հնարավոր հատկացվող մակերեսները | Շուրջ 260 մ$^2$ տարածք՝ շինությունների տանիքներին: |

*Համակարգի համառոտ բնութագիրը*

Մատակարարվող ցանցային արևային ֆոտովոլտային համակարգը, որի դրվածքային հզորությունը կազմելու է նվազագույնը **40 կՎտ**, նախատեսվում է էլեկտրական էներգիայի արտադրության և «Ստեփանավան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենք/շինությունների սեփական կարիքները բավարարելու համար:

***Տեղադրվող հզորությունը և փարածքի նկարագիրը***

Արևային ՖՎ համակարգը նախատեսվում է տեղակայել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի «Ստեփանավան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենք/շինությունների տանիքներին՝ 41.006080° հյուսիսային լայնություն, 44.383130° արևելյան երկայնություն աշխարհագրական կոորդինատներով, ծովի մակերևույթից 1417 մ բարձրության վրա: Արևային ՖՎ համակարգը տեղաբաշխվելու է տանիքին, մոտ 260 քմ մակերեսով հարավային լանջին:

Արևային ֆոտոէլեկտրական համակարգը էլեկտրական ցանցին միացնելու և <<Փոխհոսքերի հաշվառման>> սկզբունքով (net metering) աշխատելու համար թույլտվությունը և հաշվարկման սարքի տեղադրումը իրականացվում է սպառողի կողմից:

**Արևային ֆոտոէլեկտրական համակարգերի բաղկացուցիչների որակի և երկարակեցության պահանջները**

1. **Արևային ՖՎ մոդուլներ**

**ՖՎ մոդուլներ՝ որակի հավաստագրեր**

ՖՎ մոդուլները պետք է ունենան վավեր փորձարկման հաշվետվություններ՝ տրված հեղինակավոր որակյալ փորձարկման հաստատությունների կողմից (ISO 17021 / ISO 17025 և ISO 17065 հավաստագրված) IEC / UL-ի վերջին հրատարակություններով՝ ՖՎ մոդուլների որակավորման ստուգման կամ համարժեք ստանդարտների համար:

- IEC 61215. բյուրեղային ֆոտովոլտային (ՖՎ) մոդուլներ՝ Դիզայնի որակավորում և տեսակի հաստատում:
- IEC 61730. -1, -2: ՖՎ մոդուլների անվտանգության որակավորում.
  Մաս 1. Շինարարության պահանջներ,
  Մաս 2- Փորձարկման պահանջներ:
- IEC 62804. Պոտենցիալից ինդուցված դեգրադացիա (PID):

**ՖՎ մոդուլի արտադրող ընկերությունները պետք է հավաստագրված լինեն** ըստ ՝

- ISO 9001 - որակի կառավարման համակարգեր և/կամ,
- ISO 14001 - շրջակա միջավայրի կառավարման համակարգեր:

**ՖՎ մոդուլները պետք է ունենան տեխնիկական հետևյալ նվազագույն բնութագրերը.**

- Մոդուլները պետք է ունենան առնվազն **22.5 %** արդյունավետություն:
- Մոդուլների անվանական հզորության շեղումը պետք է լինի նվազագույնը 0/+3 Վտ միջակայքում:
- ՖՎ մոդուլները պետք է երաշխավորված լինեն ելքային հզորության ոչ պակաս քան 90% շահագործման 10-րդ տարվա վերջում, և 80% շահագործման 25-րդ տարվա վերջում:
- Մոդուլները պետք է երաշխավորվեն առնվազն **12 տարով** օգտագործված նյութերի թերությունների և աշխատողների հմտությունների պատճառով առաջացած խափանումների համար:

**ՖՎ մոդուլների նույնականացումը**

Բոլոր արևային ՖՎ մոդուլները պետք է ունենան նույնականացման պիտակներ (այն կարող է լինել լամինացված ներսից կամ դրսից), որոնք առնվազն ներառում են.

- ՖՎ մոդուլի արտադրողի անունը
- ՖՎ մոդուլի մակնիշը
- Մոդուլի հզորությունը -Pmax,
- Բաց շղթայի լարումը - Voc
- Կարճ միացման հոսանքը - Isc

Մատակարարը պարտավոր է պահպանել մոդուլի սերիական համարները:

2. **Ինվերտոր**

**Ինվերտորներ/հզորության կարգավորիչներ՝**

Ինվերտորը կամ ինվերտորները պետք է մատակարարվեն և տեղակայվեն մոդուլների հզորությանը համապատասխան, ոչ պակաս քան 40 կՎտ:

Ինվերտորը/ները պետք է լինի միաֆազ կամ եռաֆազ, համաձայն սպառիչի տեխնիկական պայմանի, MPPT մուտքերով:

**Որակի Հավաստագրում**

- Ինվերտորը պետք է համապատասխանի IEC-ի համարժեք Ստանդարտների վերջին հրատարակությանը, ինչպես նշված է ստորև.
- IEC 60068-2. Բնապահպանական փորձարկում
- IEC 62103 / IEC 62109-1 և 2. Էլեկտրական անվտանգություն:

**Նվազագույն տեխնիկական բնութագրեր**

- Նվազագույն, ըստ եվրոարդյունավետության պահանջներով, պետք է լինի 97%:
- Ինվերտորը պետք է ունենա ինտերնետին միացման և տվյալների փոխանցման հնարավորություն:
- Ինվերտորը պետք է ունենան առնվազն 5 տարվա երաշխիք:
- Ինվերտորներ արտադրող ընկերությունը պետք է հավաստագրված լինի ըստ.
  - o ISO 9001 – որակի կառավարման համակարգեր
  - o ISO 14001 – շրջակա միջավայրի կառավարման համակարգեր:
- Ինվերտորի ընտրված մոդելը պետք է լինի հայտնի և բարի համբավ ունեցող բնագավառի առաջատար արտադրողից, առնվազն 12 ամիս շահագործված կոմերցիոն այլ ծրագրերում:

**3. Միակցման տուփեր**

Արտաքին պայմաններում շահագործման համար ըստ անհրաժեշտության օգտագործել հաստատուն հոսանքի միակցման տուփեր, նվազագույնը IP65 պաշտպանության դասի, որոնք պետք է պարունակեն՝

- ՖՎ մոդուլների յուրաքանչյուր շարքի համար հաստատուն հոսանքի ապահովիչներ,
- ՖՎ մոդուլների շարքերի անջատման համար բավարար ունակությամբ հաստատուն հոսանքի հիմնական անջատիչներ,
- Կայծակից (IEC 62305-2) և գերլարումից պաշտպանության սարքեր:

**4. Կրող կոնստրուկցիա**

**Արևային ՖՎ մոդուլի մոնտաժման կոնստրուկցիաներ**

Մատակարարվող կրող կոնստրուկցիաները պետք է լինեն **անոդացված ալյումինի համաձուլվածքից (6005, 6061, 6063 տիպի/դասի), չժանգոտվող կամ ցինկապատ պողպատից**, և առնվազն 25 տարի համապատասխան կլիմայական պայմաններում (ՀՀՇՆ 22-01-2024, «Շինարարական կլիմայաբանություն») պետք է կատարի իր ֆունկցիոնալ գործունեությունը:

Մոդուլների ամրացման տրամատները (պրոֆիլ, rail) պետք է լինեն ամբողջական, առանց բացակների:

Տեղանքում մոդուլների տեղակայման ժամանակ հաշվի առնել մոտեցման ուղիները՝ մոդուլների մաքրման համար, համաձայն շահագործման և սպասարկման պլանի:

Մոդուլները տեղադրել շինության տանիքի լանջին կամ լանջերին պարկեցրած:

**Անհրաժեշտության դեպքում կիրառել մոդուլները 6 կետով ամրացման կոնստրուկցիաներ:**

Կրող կոնստրուկցիաները պետք է լինեն միջազգային և տեղական ստանդարտների համաձայն:

**Որակի Հավաստագրում**

- Նախագծումը և հավաքակցման աշխատանքները պետք է համապատասխանեն ՀՀՇՆ II-6.02- 2006-ին:
- Ցանցային արևային ՖՎ համակարգերի մեխանիկական կառույցները, էլեկտրական աշխատանքները և ընդհանուր մշակումը պետք է երաշխավորվեն առնվազն 5 տարով:
- Մոդուլի մոնտաժման կոնստրուկցիաները պետք է կարողանան դիմակայեն տեղադրման վայրում սեյսմիկ բեռի պահանջներին:
- Մոնտաժման կոնստրուկցիաները պետք է նախագծված լինեն, այնպես որ դիմակայեն առավելագույն քամու և ձյան բեռնվածքին համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 -ին:

**5. Այլ ենթահամակարգեր /բաղադրիչներ**

Արևային ՖՎ համակարգերում օգտագործվող այլ ենթահամակարգերը/ բաղադրիչները (մալուխներ, միակցիչներ, միացման տուփեր, շղթայական պաշտպանող սարքեր և այլն) պետք է համապատասխանեն էլեկտրական անվտանգության համապատասխան միջազգային/ազգային ստանդարտներին/նորմերին:

Կիրառվող բոլոր նյութերը պետք լինեն արևային կայանների համար նախատեսված, դիմակայեն ՈւՄ ճառագայթմանը, պահպանեն իրենց հատկությունները շահագործման ամբողջ ընթացքում: Այս պահանջները պարտադիր են փաստաթղթում նշված բոլոր նյութերի համար:

Հաստատուն հոսանքի էլեկտրական լարերը պետք է լինեն TUV սերտիֆիկատով հատուկ PV1-F տիպի: DC 600-1800 վոլտ մալուխները պետք է համապատասխանեն 25 տարվա պիտանելիությանը, և համապատասխանեն **EN50618/TUV 2pfg 1169/09/07 կամ IEC62930** ստանդարտի:

ՖՎ մոդուլի միակցիչները պետք է լինեն բարձր որակի և փորձարկված լինեն ըստ EN 50521-ի:

Բաժանիչ և/կամ հավաքիչ տուփերը և անցկացման ուղիները (ճկախողովակներ, կոռոբներ) հաստատուն և փոփոխական հոսանքի համար պետք է լինի առանձնացված և չայրվող նյութերից:

Արտաքին լարանցման դեպքում օգտագործել արտաքին միջավայրում երկարատև աշխատելու համար նախատեսված ճկախողովակներ, խողովակներ կամ մալուխատարեր:

**6. Հողանցման համակարգ**

Անհրաժեշտ է նախատեսել առաջնային և երկրորդային հողանցում, որոնք ունեն ընդհանուր կապ ՖՎ կայանի հաստատուն և փոփոխական հոսանքի հատվածների միջև: Հողանցման համակարգը պետք է նախագծված լինի համաձայն IEC, VDE կամ IEEE ստանդարտների և ապահովի կոնտուրի դիմադրությունը ոչ ավել քան 4.0 Օհմ:

**7. Էլեկտրացանցին միացման պահանջներ**

ՖՎ կայանի միացումը էլեկտրացանցին պետք է համապատասխանի ՀԷՑ-ի կողմից կիրառվող տեխնիկական նախագծման և շահագործման նվազագույն չափանիշներին և հետևյալ նորմատիվ փաստաթղթերին՝

- ՀՀ կառավարության որոշում №1933-N, 2006թ., «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում №1033-N, 2008թ., «Էլեկտրական բաշխիչ սարքերին և ենթակայանների սարքվածքին ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում №1943-N, 2006թ., «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում №1922-N, 2006թ., «1000 Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատներին ներկայացվող անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում №961-N, 2007թ., «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում №1605-N, 2007թ., «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»:
- ԳՈՍՏ 13109-97 «Ընդհանուր օգտագործման էներգահամակարգերում էլեկտրաէներգիայի որակի ստանդարտներ»:

**8. Տեղադրում, հավաքակցում և շահագործում**

Արևային համակարգերի տեղադրման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել.

- Ինվերտորները գերլարումներից պաշտպանելու համար անհրաժեշտ է հաստատուն (եթե ինվերտորի հավաքակցվածքում բացակայում է) և փոփոխական հոսանքի մուտքերում կիրառել համապատասխան պաշտպանիչ միջոցներ:
- Ինվերտորների փոփոխական հոսանքի ելքը միացնել (ինտեգրել) սպառիչի ներքին, 0.2 կՎ (միաֆազ) կամ 0.4 կՎ (եռաֆազ), ցանցին:
- Տանիքը, որտեղ տեղադրվում է համակարգը, պետք է բավարար կրողունակ լինի, իսկ անհրաժեշտության դեպքում կատարել տեղանքի (տանիքի) կրողունակության մեծացում (ուժեղացում):

- Կրող կոնստրուկցիաները տանիքին պետք է ամրացվեն ամուր, որպեսզի դիմակայեն ձյան, քամու, ինչպես նաև համակարգի սեփական ծանրության ազդեցությանը, միաժամանակ չխաթարելով տանիքի համասեռությունը:
- Տանիքի վրա արված բոլոր անցքերը պետք է ջրամեկուսացվեն օգտագործելով համապատասխան նյութեր և մեթոդներ:
- Հավաքակցման աշխատենքները պետք է իրականացվեն համապատասխան շինարարական նորմերի և ստանդարտների:
- Բոլոր էլեկտրական լարերը պետք է ամրացված լինեն պատերին, շինարարական կոնստրուկցիաների հատման մասում անցնեն պարկուճների միջով:
- Լարերի միացումը և ճյուղավորումը կատարվում է ճյուղավորման տուփերում զոդմամբ, կամ սեղմիչների օգնությամբ: Տուփերում, լարերի մուտքերի տեղերում, պետք է տեղադրված լինեն վռաններ (втулка) մեկուսիչ նյութերից (թույլատրվում է կիրառել խողովակի կտորներ):
- Ինվերտորը պետք է տեղադրվի կողմնակի անձանցից պաշտպանված, սպասարկման համար հասանելի, ոչ շոգ տարածքում/շենքում/սենքում և համաձայն արտադրողի կողմից ներկայացված պահանջների:
- **Նախակրթական և ուսումնական հաստատություններում ինվերտորի տեղադրման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել սաների անհասանելության և անվտանգության պահանջներին:**

**Համակարգը աշխատեցնելու հմտությունների փոխանցում և ուսուցում**

- Արևային ֆոտոէլեկտրական համակարգի մատակարար ընկերությունը պետք է պատշաճ կերպով ապահովի շահագործողի ուսուցումը և անհրաժեշտ հրահանգավորումը, ֆոտոէլեկտրական համակարգի անխափան աշխատանքը ապահովելու և դժբախտ պատահարներից խուսափելու համար:

**Համակարգի և բաղադրիչների երաշխիք**

- Արևային ֆոտոէլեկտրական համակարգ մատակարարող ընկերությունը պետք է տրամադրի համակարգի առանձին բաղադրիչների համար երաշխիքներ: ՖՎ մոդուլների համար առնվազն 12 տարվա, ինվերտորների համար առնվազն 5 տարվա և համակարգի մնացած այլ բաղադրիչների համար առնվազն 10 տարվա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ** | **«Դի Օհմ Էներջի» ՍՊԸ** |
| **ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1** | **ք.Երևան, Ալեք Մանուկյան 15Ա** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** | **Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ** |
| **հ/հ900252101648** | **Հաշվեհամար 2050022599141001** |
| **ՀՎՀՀ 06954104** | **ՀՎՀՀ00152889** |
| ------------------------------- | ------------------------------- |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

*Հավելված N 2*
*«26» 03 2026թ. կնքված*
*ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | Նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45261115/1 | **Արևային ֆոտովոլտային համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ** | | | | 6000000 | 6000000 | 6000000 | 6000000 | 6000000 | 6000000 | 6000000 | 6000000 | **6000000** | **6000000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

***Աշխատանքների գումարի 20%-ը՝ վճարում է համայնքը, 80%-ը՝ այլ ներդրողը: Աշխատանքների կատարման դիմաց վճարումն իրականացվում է սկզբում համայնքի մասնաբաժնի չափով, այնուհետև աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց հետո իրականացվում է ֆինանսավորում այլ ներդրողի մասնաբաժնով:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ**
**ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**h/h900252101648**
**ՀՎՀՀ 06954104**

-----------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Դի Օհմ Էներջի» ՍՊԸ**
**ք.Երևան, Ալեք Մանուկյան 15Ա**
**Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ**
**Հաշվեհամար 2050022599141001**
**ՀՎՀՀ00152889**

-----------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

Հավելված 5

**Երաշխիքային սպասարկումը.**

1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում Աշխատանքների և սարքավորումների ամբողջական, անվճար երաշխիքային սպասարկում, որն իր մեջ ներառում է.

I. Մոնիթորինգային համակարգի միջոցով կայանի աշխատանքային ռեժիմների ամենօրյա հետևում, արդյունքների ամփոփում,

II. Տարեկան առնվազն մեկ անգամյա այցելություն կայանների տեղադրման վայր՝ դրանց վիճակի ուսումնասիրության, առկա խնդիրների արձանագրման և դրանից բխող համապատասխան գործողությունների (ստուգումներ, գրառումներ, խնդիրների վերացում, խորհրդատվություն և այլն) իրականացման համար,

III. ցանկացած տեսակի խնդրի, սարքավորման խափանման կամ վնասվածքի վերացում, այդ թվում՝ վահանակների, փոխակերպիչների, մալուխների, կրող կոնստրուկցիաների կամ ավտոմատ անջատիչների խափանվելու կամ վնասվելու դեպքում դրանց փոխարինումը, համաձայն 2-րդ կետի:

2. Կատարողը նաև պարտավորվում է իր հաշվին և անհատույց վերանորոգել արևային ֆոտովոլտային կայանների ցանկացած վնասում, որոնք պայմանավորված են Կատարողի աշխատանքների անպատշաճ որակով:

3. Կատարողն երաշխավորում է, որ Պայմանագրով մատակարարվող արևային ֆոտովոլտային վահանակներն ունեն գործարանի (արտադրողի) կողմից տրամադրված 15 (տասնհինգ) տարվա անվճար ապրանքային երաշխիք և արտադրողականության՝ 30 (երեսուն) տարվա երաշխիք, իսկ փոխակերպիչների դեպքում՝ անվճար ապրանքային 5 (հինգ) տարվա երաշխիք:

**Արտադրողականության երաշխիք.**

4. Եթե երաշխավորված արտադրողականության ժամանակահատվածի որևէ տարվա ընթացքում արևային ֆոտովոլտային կայաններից որևէ մեկի արտադրողականության չափը պակաս է լինում սահմանված չափից, ապա Կատարողը պարտավորվում է իր հաշվին փոխհատուցել առաջացած շեղումները՝ Պատվիրատուի գրավոր պահանջից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում:

5. Կատարողը տրամադրել է տարեկան արտադրողականության չափերը՝ հաշվի առնելով վահանակների տարեկան դեգրադացիան՝ գործարանային երաշխիքների ժամկետներում: Բացի դեգրադացիայի տարեկան նվազումներից հնարավոր են նաև տարեկան +/-5% արտադրության շեղումներ՝ պայմանավորված տարեկան եղանակային անկանխատեսելի շեղումներով, վահանակների աղտոտվածությամբ և այլ պատճառներով, ընդ որում՝ վահանակների աղտոտվածության համար Կապալառուն չի կրում պատասխանատվություն:

6. Կատարողը չի կրում պատասխանատվություն արտադրողականության նվազման համար, եթե այն տեղի չի ունեցել Կատարողի կողմից իրականացված ոչ պատշաճ որակի աշխատանքների կամ Կատարողի կողմից տեղադրված սարքավորումներից բխող խափանումների պատճառով, մասնավորապես՝ բաշխիչ էլեկտրական ցանցերի կողմից առաջացող խնդիրներով (անջատումների քանակներ, մատակարարվող էլեկտրաէներգիայի սահմանված որակի շեղումներ, հաճախակի լարման տատանումներ և այլն), արտաքին ազդեցության հետևանքով վնասումներ և այլն:

Հավելված 6

**Արևային ֆոտովոլտային կայանների շահագործման կանոններն ու պայմանները.**

- Ընդհանուր արևային համակարգի խնամք, այդ թվում՝ վահանակների լվացում (առանց քիմիական հեղուկների, առանց բարձր ճնշման ջրի, այսինքն՝ չօգտագործել հատուկ ճնշում առաջացնող սարքեր, օրինակ՝ «Kärcher» և առանց քերող կամ խազող գործիքների), ընդ որում՝ վահանակները լվանալ բացառապես առավոտյան շուտ կամ ուշ երեկոյան ժամերի, երբ վահանակների վրայի ջերմաստիճանը շրջակա միջավայրի ջերմաստիճանից բարձր չէ, ցանկալի է առավոտյան շուտ, երբ արևի ճառագայթման ինտենսիվությունը դեռևս մեծ չէ, և ինվերտորը թողարկված չէ (ավելի մանրամասն Կապալառուն կներկայացնի շահագործման մասով հրահանգավորման ժամանակ) https://www.ohmenergy.am/blogs/Inch-anel-erb-arevayin-vahanakneri-vra-dzyun-e-kutakvel,
- չքայլել վահանակների վրայով կամ ծանր ազդեցությունների հետևանքով չվնասել դրանք, որոնք կարող են և լինել երրորդ անձանց կողմից,
- Առանց Կապալառուի ինքնուրույն չանջատել կամ վահանակների շարքերի փոփոխություններ չիրականացնել,
- Անհրաժեշտ փոփոխություններ իրականացնել բացառապես այն անձանց կողմից, ովքեր ունեն համապատասխան որակավորում կամ հրահանգվել, վերապատրաստվել և ծանոթացվել են շահագործման կանոններին Կապալառուի կողմից իրականացվելիք թրեյնինգների միջոցով,
- Տարածքում չիրականացնել այնպիսի էլեկտրական միացումներ, որոնք կարող են արևային կայանի կրող կոնստրուկցիան գցել լարման տակ,
- Տվյալ տնտեսությունում չիրականացնել այնպիսի էլեկտրական սխեմաների կիրառում, որը կառաջացնեի այնպիսի կարճ միացումներ կամ էլեկտրական խափանումներ, որոնք կվնասեն տնտեսության մեջ գործող էլեկտրական սարքավորումներն ամբողջությամբ (օրինակ, լվացքի մեքենա, սառնարան և այլն), այդ թվում՝ կերպափոխիչ սարքը՝ ինվերտոր,
- Ինքնուրույն չձեռնարկել վահանակների խմբերի կամ շարքերի միացումների փոփոխություններ,
- Նախքան ինվերտորի շահագործումը՝ կարդալ տվյալ ինվերտորին վերաբերող բոլոր հրահանգները և նախազգուշական դիտողությունները,
- Ինքնուրույն չիրագործել ինվերտորի ապամոնտաժումը. դա կարող է հանգեցնել հոսանքահարման, հրդեհի առաջացման և երաշխիքի անվավերությանը,
- Կրակի կանխման համար ինվերտորին մոտ չտեղադրել հրավտանգ, պայթունավտանգ և քայքայիչ նյութեր: